

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ա-2

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«21» ___01___ 2020 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ «ՀՀ ԳԱԱ»), որը գործում է ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Աշոտ Սադյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Մանրէների ազգային հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված **14.182.700 (տասնչորս միլիոն հարյուր ութսուն երկու հազար յոթ հարյուր)** ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից մինչև 10 տոկոս շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում, ապա՝ կնքել համաձայնագիր,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է **14.182.700 (տասնչորս միլիոն հարյուր ութսուն երկու հազար յոթ հարյուր)** ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Կոմիտեն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

Հ/հ 900011024115

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»

գիտատարտադրական կենտրոն ՊՈԱԿ

ք. Երևան, Գյուրջյան 14

ք. Երևանի թիվ 1 ՏԳԲ

Հ/հ 900018005729

ՀՎՀՀ 00871944

Նախագահ




Տնօրեն




Ծրագրի գիտական ղեկավար


(ստորագրություն)

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սարգսյան

Հավելված 1
2020 թ.
N ՇԻ-2 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

«Մանրէների ազգային հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը» ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ Սաղյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «21» 01 2020 թ. N ՎԻ-2 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 14.182.700 (տասնչորս միլիոն հարյուր ութսուն երկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»
գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ

Նախագահ՝

Տնօրեն՝







ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Մանրէների ազգային հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը:

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի «Մանրէների ավանդադրման կենտրոն» հիմնարկի (ՄԱԿ) իրականացվող աշխատանքների նպատակն է համալրել մանրէների կուլտուրաների ազգային հավաքածուն մեր տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ մանրէների տեսակներով, որոնք հանդիսանում են հացաթխման, ավանդական կաթնաթթվային մթերքների մերանների, կերային, կենսապարարտանյութերի և այլ կենսաբանական ակտիվ հավելումների արտադրության կարևոր նախադրյալ: Ուշադրություն է դարձվելու սպորավոր բակտերիաների, ինչպես նաև էքստրեմոֆիլ շտամների հավաքագրմանը և ուսումնասիրությանը՝ որպես տարբեր ֆերմենտների և այլ կենսաբանական ակտիվ միացությունների արտադրիչներ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:

Կենտրոնում պահպանվում են տնտեսության տարբեր բնագավառներում օգտագործվող բազմաթիվ մանրէային կուլտուրաներ՝ կենսաբանական ակտիվ միացությունների արտադրիչներ, գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարի նպատակով օգտագործվող միջատասպան շտամներ, պոլիմերներային միացություններ քայքայող սնկեր և այլն: Հավաքածուի մանրէների շտամների կենսունակության պահպանման և վերարտադրողականության ապահովման համար կարևոր է դրանց երկարատև պահպանման արդյունավետ եղանակների մշակումը:

Ոչ սպորավոր բակտերիաների առանձին խմբերի, այդ թվում կաթնաթթվային բակտերիաների պահպանումը կենսունակ վիճակում, իրականացվում է համապատասխան սննդամիջավայրերում պարբերական վերացանքների միջոցով, իսկ երկարատև պահպանման համար օգտագործվում է ցածր ջերմաստիճաններում պահպանման մեթոդը՝ 20% գլիցերինի միջավայրում -20°C-ի պայմաններում: Շաքարասնկերի պահպանման արդյունավետ մեթոդը ստերիլ վազելինի յուղի տակ և պինդ ազարային սննդամիջավայրերում պահպանումն է, իսկ միցելիային սնկերի և բազիդիոմիցետների համարը՝ պահպանումը վազելինի յուղի տակ:

Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է ուսումնասիել նոր մեկուսացված էնտոմոպաթոգեն բացիլների հատկությունները, նրանց միջատասպան ակտիվությունը, որը հիմք կհանդիսանա գյուղատնտեսական վնասատուների դեմ կենսապատրաստուկների արտադրության համար: Կատարվելու են նաև էնտոմոգեն և էնտոմոպաթոգեն սպորառաջացնող բակտերիաների տիպային այլ մանրէների նույնականացում՝ մոլեկուլային գենետիկական ուսումնասիրությունների հիման վրա: Կշարունակվեն կաթնաթթվային բակտերիաների ուսումնասիրության և դասակարգման աշխատանքները, այդ թվում ժամանակակից մեթոդների կիրառմամբ: Ուսումնասիրություններ կիրականացվեն պոլիմերային նյութերը քայքայող միտոսպորիկ սնկերի ուսումնասիրության ուղղությամբ:

4. Աշխատանքի բովանդակությունը:

Ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքներն ընդգրկում են մանրէաբանության բնագավառների մի շարք կարևոր ուղղություններ: Մասնավորապես.

Առաջին կիսամյակ՝

- Մանրէների Ազգային հավաքածուի, որը ներառում է սպորառաջացնող և ոչ սպորավոր բակտերիաների, շաքարասնկերի, սնկերի և այլ խմբերի մանրէների շտամեր, նրանց պահպանում կենսունակ վիճակում և անձնագրավորում,
- սնկերի ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում, այդ թվում ածխածնի աղբյուրների յուրացումն աուքսանոգրաֆիայի եղանակով,
- էնտոմոպաթոգեն բակտերիաների նոր շտամերի մեկուսացում,
- սպորառաջացնող բակտերիաների ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում,
- ոչ սպորավոր բակտերիաների՝ *Pseudomonas* ցեղի և ֆիտոպաթոգենների, ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում,
- կովի մաձնից անջատված կաթնաթթվային բակտերիաների կուլտուրալ, ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում:

Երկրորդ կիսամյակ՝

- Մանրէների ազգային հավաքածուի պահպանումը կենսունակ վիճակում և կրիոկոնսերվացիա,
- կաթնաթթվային բակտերիաների հակաբիոտիկների նկատմամբ ակտիվության հետազոտում,
- նոր մեկուսացված էնտոմոպաթոգեն բակտերիաների միջատասպան ակտիվության ուսումնասիրում,
- *Rhodococcus* ցեղի և այլ խմբերի շտամերի ածխաջրածնի յուրացման ուսումնասիրում,
- միտոսպորիկ սնկերի երկարատև պահպանում վազելինի յուղի տակ,
- արտադրական կարևոր նշանակություն ունեցող շտամերի գենատիպավորում:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»
գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ

Նախագահ՝


ՌԱՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տնօրեն՝



Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սարգսյան

ՕՐԱՑՈՒՑԱՑԻՆ ՊԼԱՆ *

«Մանրէների ազգային հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը» ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները, եռամսյակներ	պահանջվող գումարը (հազ. դրամ)
1.	Մանրէների հավաքածու:	Կենսունակության ապահովումը:	Սպորառաջացնող և ոչ սպորավոր բակտերիաների, շաքարասնկերի, սնկերի և այլ խմբերի մանրէների շտամների պահպանումը կենսունակ վիճակում:	Մանրէների վերարտադրողականությունը տարբեր պայմանների ազդեցությամբ:	I, II	1177,4
2.	Մանրէների հավաքածու:	Ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում:	Ցածրակարգ սնկերի հատկությունների ուսումնասիրությունը:	Նախատեսված է ուսումնասիրել ածխածնի աղբյուրների յուրացումն աուքսանոգրաֆիայի եղանակով:	I, II	4709,55
			Սպորառաջացնող բակտերիաների հատկությունների ուսումնասիրությունը:	Մի շարք մանրէների նոր տեսակների բնութագրում:		
			Ոչ սպորավոր բակտերիաների՝ <i>Pseudomonas</i> ցեղի և ֆիտոպաթոգենների, ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում:	Մի շարք մանրէների նոր տեսակների բնութագրում:		
			Կովի մածնից մեկուսացված կաթնաթթվային բակտերիաների կուլտուրալ, ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում:	Մի շարք մանրէների նոր տեսակների բնութագրում:		
3.	Մանրէների հավաքածու:	Մանրէների հավաքածու համալրում:	Էնտոմոպաթոգեն բակտերիաների նոր շտամերի մեկուսացում:	Մանրէների հավաքածու ընդլայնում:	I, II	1177,4

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով

4.	Մանրէների հավաքածու:	Կենսունակության ապահովումը:	կրիոկոնսերվացիա:	Մանրէների վերարտադրողականությունը տարբեր պայմանների ազդեցությամբ:	III, IV	2354,8				
			Կենսաքիմիական հատկությունների ուսումնասիրում:	Նախատեսված է որոշել ԿԹԲ-ների հակաբիոտիկների նկատմամբ ակտիվությանը:						
5.	Մանրէների հավաքածու:	Կաթնաթթվային բակտերիաներ:	Հակաբիոտիկների նկատմամբ ակտիվության հետազոտում:	Հակաբիոտիկների նկատմամբ բարձր ակտիվ կաթնաթթվային բակտերիաներ բնութոյություն:	III, IV	1177,4				
			Մանրէների հավաքածու:	Էնտոմոպաթոգեն բակտերիաներ:			Միջատասպան ակտիվության ուսումնասիրում:	Մի շարք մանրէների նոր տեսակների բնութագրում:	III, IV	1177,4
			Մանրէների հավաքածու:	<i>Rhodococcus</i> ցեղի և այլ խմբերի շտամեր:			Ածխաջրածնի յուրացման ուսումնասիրում:	Մի շարք մանրէների նոր տեսակների բնութագրում:	III, IV	1177,4
6.	Մանրէների հավաքածու:	Նույնականացում:	Արտադրական կարևոր նշանակություն ունեցող շտամերի գենատիպավորում:	Մանրէների ժամանակակից դասակարգում:	III, IV	1177,35				
Ընդամենը						14128,7				

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»
գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ

Նախագահ

Տնօրեն


(ստորագրություն)
ՌԱՂԻԿ ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Օրագրի գիտական ղեկավար

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սարյան


(ստորագրություն)

Հավելված 4
 « 21 » 01 2020 թ.
 N 26-Ձ պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ


«Մանրէների ազգային հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը» ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	11515,4	2303	2878	2878	3454,6
2	տնտեսական և այլ ծախսեր*	2667,3	533,5	666,8	666,8	800,2
ԸՆԴԱՄԵՆԸ		14182,7	2837	3545	3545	4255,7

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի

տնօրեն՝


 (ստորագրություն)

Ա.Սահակյան

գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

Ք.Վարդանյան



* Բուներում իրականացվող ծրագրերի համար նախատեսվել է ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը

Հավելված 5
 « 21 » 01 2020 թ.
 N 24-2 պայմանագրի

ՏՆՏԵՄԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ՝
 «Մանրէների ազգային հավաքածուի՝ գենաֆոնդի պահպանումը» ծրագրի

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	1380
	էլեկտրաէներգիայի ծառայություն	676
	գազի ծառայություն	468
	ջրամատակարարման ծառայություն	73
	կապի ծառայություն	141
	ադրահանություն	22
2	Գույք, գրենական պիտույքներ, տնտեսական ապրանքներ	64
3	Սարքեր և սարքավորումներ	720
4	Նյութեր	-
5	Գործուղումներ	-
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
7	Արշավախմբեր	-
8	Հրատարակման ծախսեր	-
9	Տրանսպորտային ծախսեր	359,3
10	Անվտանգության ապահովման ծախսեր	14,4
Ընդամենը՝		2667,3

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի

տնօրեն՝  Ա.Սաղյան

(ստորագրություն)

գլխավոր հաշվապահ՝  Բ.Վարդանյան

(ստորագրություն)

* Բռներում իրականացվելիք ծրագրերի համար չի լրացվում



Հավելված 6
 « 21 » 01 2020 թ.
 N 26-2 պայմանագրի


ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«Մանրէների ազգային հավաքածուի՝ զենաֆոնդի պահպանումը» ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1	Զարգարյան Հովհաննես Լորայրի	Հիմնարկի ղեկավար	կ.գ.թ.	130,0
2	Ղազանյան Նարինե Լևոնի	Գիտաշիատող (լաբորատորիայի վարիչի օգնական, ՄԱԿ-ի սպորավոր բակտերիաների և ճառագայթասնկերի հավաքածուի պատասխանատու) (ն. հ.)		125,0
3	Կինոյան Մարինա Համագասպի	Գիտաշիատող (թանկարժեք մետաղների պահպանման պատասխանատու, ՄԱԿ-ի ոչ սպորավոր բակտերիաների հավաքածուի պատասխանատու)		125,0
4	Խաչատուրյան Նունե Սամուելի	Գիտաշիատող (ՄԱԿ-ի ցածրակարգ և բարձրակարգ սնկերի հավաքածուի պատասխանատու)		125,0
5	Չիտյան Կարինե Վիրաբի	Մենդի կենսաանվտանգության լաբորատորիայի վարիչ (ՄԱԿ-ի Շարքաանկերի և կաթնաթթվային բակտերիաների հավաքածուի պատասխանատու)	կ.գ.թ.	150,0
6	Չոլխյան Լարիսա Հրանտի	Ավագ լաբորանտ		95,0
7	Հարությունյան Աստղիկ Երվանդի	Մանրէների հավաքածուների էլեկտրոնային տվյալների բազաների համակարգող, ցանցային ադմինիստրատոր		120,0
8	Կոստանյան Սվետլանա Ֆրունզեի	Լաբորանտ		89,62
Ընդամենը				959,62

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի

տնօրեն


 (ստորագրություն)

Ա.Սահակյան

Կադրերի բաժնի պետ


 (ստորագրություն)

Ռ.Սահակյան

